ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի անդամների ընդհանուր ժողովի արձանագրությունից

2019թվականի հունվարի 29- ին, ժամը 13-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի անդամների ընդհանուր ժողովը՝ համայնքի ղեկավարի 2018 թվականի տարեկան և երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության քննարկման վերաբերյալ:

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ, համայնքի թվով 42 բնակիչներ , համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Նախագահությամբ Վ. Գրիգորյանի
Քարտուղարությամբ Հ. Մանուկյանի

ՕՐԱԿԱՐԳ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի ղեկավարի 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
/Զեկուցող՝ համայնքի ղեկավար Վաչիկ Գրիգորյան/

Արտահայտվեցին՝

Մանուկյան Հարություն- համայնքի անդամ
Գևորգյան Սամվել - ավագանու անդամ
Նիկողոսյան Աշոտ - ավագանու անդամ
Խաչատրյան Անուշավան -համայնքի անդամ
Մանուկյան Մելքոն - համայնքի անդամ
Եգորյան Հմայակ - համայնքի բնակիչ
Եղիազարյան Արայիկ- համայնքի անդամ
Մուշեղյան Մուշեղ - համայնքի բնակիչ

Որոշեցին

1.Հավանություն տալ Ծիածան համայնքի ղեկավարի 2018 թվականի տարեկան և երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքներին

2.Հանձնարարել համայնքի ղեկավարին և ավագանուն՝ համայնքի անդամների ընդհանուր ժողովում բարձացված հիմնախնդիրներին և առաջարկություններին տալ համապատասխան լուծում:

Իսկականի հետ ճիշտ է

նախագահ Վ. Գրիգորյան

քարտուղար Հ. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան համագյուղացիներ , հյուրեր, այսօր Ձեր քննարկմանն եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի համայնքապետարանի և ավագանու կողմից 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին - առանձին , վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունը:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան համայնքի բյուջե՝

Եկամուտներ ընդամենը՝

հ/հ	Եկամուտներ	2018թ հաստատված	2018թ կատարողականը	կատարողականը առ 01.01. 2019թ. o/o
1	Հողի հարկ	4700.0	2183,5	46,5
2	Գույքահարկ	3621.5	3018,0	83,3
3	Վարձակալական հողի հարկ	68,9	74.6	108,3
4	տեղական տուրքեր	150,0	127.1	84,7
5	տեղական վճարներ	818,.0	10.0	1,2
6	այլ ոչ հարկային եկամուտ	---	50.0	---
7	ընդամենը սեփական եկամուտներ	9358,4	5463,2	58,3
8	ազատ մնացորդ առ 01.01.2018թ.	329,9		
9	դոտացիա	20573,8	20573,8	100
10	Հողի օտարումից եկամուտներ		581,4	
	Ընդամենը	29932,2	26037,0	87

Ընդամենը եկամուտներ՝ 29932,2 հազ. դրամ

2018 թվականի դեկտեմբերի 30- ի դրությամբ կատարվել են հետևյալ ծախսերը ըստ բնագավառների

1. Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար

1) հ/պ աշխատավարձ - 13011,1 հազ.դրամի դիմաց -- 12140.5 հազ,դրամ
2. խրախուսանք - 875,0 -
3. Էլ. ծառայություն - 1200.0 - 946,8 -
4. կապի ծառայություն - 210,0 - 207,4
5. գույքի և սարքավորումներ- 996,0 - 996,0
6. համակարգչային ծառայությու 200,0 - 200,0
7. գրասենյակային նյութեր - 300,0 -- 218,9
8.հատուկ նպատակային նյութեր -200,0 – 32,0
9.տեղեկատվական թերթ 100,0 - 52,8
10.վարչական սարքավորումներ - 500,0 -
11.ներկայացուցչական ծախսեր 200,0 - 200,0

01.3.3
12. համակարգչային ծառայություն - 28,8 - 28,8
01.6.1
13. ընթացիկ նորոգում և պահպան- 700,0 - 700,0
14. համայնքային ասոցացիա 23,5 - 23,5
15.մասնագիտական ծառայություն- 300,0- 30,0
16. ընթացիկ դրամաշնորհ - 869,0 - 851,4
04.2.1
17.աշխատավարձ - 448,8 - 441,6

2.Շրջակա միջավայր
05.1-1
18.Աղբահանում - 996.0 - 996.0
06.3-1
19.Խմելու ջրի ջրամատակարարում 120,0-
06.4-1
20,Փողոցների լուսավորություն - 600,0- 475,0

3.Մշակույթի տուն
08.2.3
21. մ/տ աշխ. աշխատավարձ-- 3450,0 - 3358,5
22. խրախուսանք - 258,0 -
23. ընդհ. բնույթի հանր. ծառայություն - 900,0 - 868,0
24. գրադարաններ– 80,0 - 60,0

4.Հանգիստ և կրոն
08.2.1
25. հանգստի և ազատ ժամանցի կազմակեր- 800,0 - 800,0

5. Սոցիալական պաշտպանություն
10.7.1
26. սոցիալական օգնություն -- 1913,0 - 1 913,0,
27.նվիրատվություն այլ շահույթ չհետապն 150,0 -

ընդամենը ծախսեր՝ 30325,1 -- 25540,3 հազ.դրամ

2.Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկների իրավունքների պաշտպանության բնագավառ

1. Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է քաղաքացիների ընդունելության օր, որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ:
   2018թվականի ընթացքում համայնքի բնակիչներին տրվել է 290 տեղեկանքներ և 102 գրություններ այլ կազմակերպություններին:
2. Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

3 . **Հասարակական կարգի պահպանության բնագավառում**

1.Համայնքում պահպանվել է կարգ ու կանոն , մեծ խախտումներ համայնքի բնակիչների կողմից չեն կատարվել
2. Համայնում կատարված իրավախախտումների մասին ոստիկանության ներկայացուցչի տրված տեղեկատվության համաձայն որոշ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության:

4 **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

1. Աջակցել ենք զորակոչին և ուսումնավարժական հավաքներին:
2 Աջակցել ենք Արցախի պատերազմի մասնակիցների և զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներին:
3.Աջակցել ենք ՔՊ մարմինների գործունեությանը:

5.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Աջակցել ենք սոցիալապես անապահով և հարազատը կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը և տրվել է սոց. Օգնություն;

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Արմավիրի մարզպետարանից ձեռք բերված պարարտանյութը և դիզ.վառելայնութը բաշխվել է համայնքի գյուղացիական տնտեսություններին
2. Բարեկարգվել է գյուղամիջյան և դաշտամիջյան հողային ճանապարհները
3, Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
4 Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ:
5 Կազմակերպվել և ժամանակին վիճակագրական վարչություն է ներկայացվել բնակչության, անասնագլխաքանակի, բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի ընթացքի, ստացված համախառն բերքի և միջին բերքատվության մասին ամսեկան հաշվետվությունները;

7.ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1 .Աշխատում է համայնքի բուժ. կետը
2. Ունենք լավ վերանորոգված մշակույթի տուն՝ համալրված ժամանակակից տեխնիկայով որտեղ գործում պարի և թատերական խմբակը
3. Մշակույթի տանը տոնական և հիշատակի օրերին կազմակերպվում են միջոցառումներ և անցկացվում ասմունքի հուշ-երեկոներ
4.Գործում է գրադարանը, որը համալրված է համապատասխան համակարգչային Սարքավորումներով և հարուստ գրականությամբ:
5.Ակտիվ գործում է թատերական խմբակը և ամեն տարի մասնակցում է ,,Նռան հատիկ,, մանկապատանեկան մրցույթ-փառատոնին և արժանանում պատվոգրերի և հուշանվերի;
6. Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի 63 կենսաթոշակառու կանանց հատկացվել է նվերներ
7. Վերջին զանգի կապակցությամբ համայնքի 15 շրջանավարտներին հատկացվել է գումար
8. Կազմակերպվել է համայնքի 90 կենսաթոշակառուների մեկօրյա հանգիստը <<Կարբիի ձոր>> հանգստյան գոտում անցկացնելու համար;
9. Համայնքի 0-15 տարեկան 170 երեխաներին Ամանորի կապակցությամբ բաժանվել են նվերներ;

8.ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում չկա առանձնացված տարածք:
1. Շրջակա միջավայրը մաքուր պահելու համար ամեն տարի բյուջեի ձևավորման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում աղբաթափման աշխատանքների վրա:
2. Համայնքում շաբաթը 1 անգամ կատարվում է աղբաթափման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում՝ 2 անգամ:
3. Բարեկարգվել են գյուղամիջյան փողոցները և դաշտամիջյան ճանապարհները ավազահողային ծածկույթով:

Ծիածանի համայնքում 2019 թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

1.Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
2.Ոռոգման ցանցի մասնակի նորոգում:
3. 2 փողոցներում գիշերային լուսավորության անցկացում:
4. Գյուղ մտնող կենտրոնական փողոցի մասնակի ասֆալտապատում
5.Գյուղ, մթերքների իրացման հետ կապված խնդիրների լուծում
6. Գյուղամիջյան և դաշտամիջյան հողային ճանապարհների բարեկարգում հողաավազային ծածկույթով;

Համայնքի ղեկավար՝ Ա. Գրիգորյան

Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Մանուկյան